



## ՏԱՐ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ

Խօսքն Աստուծոյ առաքեցաւ  
Եւ բնակեցաւ յարգանդ կուսին, աւետիս  
Զոր մարգարէք մտօք տեսին, աւ. եւն  
Յառաջազոյն գուշակեցին  
Հրեշտակապետըն Գաբրիէլ  
Երանի տայր Մարիամու  
Փեզ երանի՛ կոյս Մարիամ  
Պիտի ծնանիս զԱստուածորդին  
Սուրբ Յովհաննէս մօրն յարգանդին  
Երկրպագեաց Աստուածանին  
Ասողն երեւէր ի յարեւելքն  
Առաջնորդէր Պազտասարու  
Մեծ սքանչէլի բանէր եղաւ  
Վասն իննամսու ճանապարհին  
Ելան եկին Երուսաղէմ  
Որ տեսնուին զԱստուածորդին  
Յառաջ երթան ի Բեթղանէմ  
Մանուկ ծնեալ ի քարայրին  
Մէկ մէկ մտին զի տեսնէին  
Ի գուրս զային զարմանային  
Երեխնըն միաբան մտին  
Մանուկ պատեալ խանձարուրին (կրկ)  
Դրած անբանից մորին.

Նորա տեսին հաւատացին  
Եւ հաւատով երկիր պազին:  
Ոսկի կնդրուկ զմուռ բերին  
Այն կուսածին թագաւորին  
Երբ ընդ օրէնքըն թմուցին  
Մուա օրէնքըն Մովսէսի.  
Երբ քառասունք կատարեցաւ  
Ոտիքն եկաւ ի տաճարին.  
Ողորմութեան գուրըն բացաւ  
Փակեալ բանիւ մարգարէին.  
Դրզրդեցաւ ինքնին բացաւ  
Նորա մտին ի տաճարին.  
Քաղաքացին ի գուրս թափին  
Տեառն ընդառաջ լոյս վառէին  
Սուրբ Սիմէռն սուրբ ծերունին  
Հոգովըն կայր ի տաճարին.  
Ի գիրկն առաւ զԱստուածորդին  
Նա այլ հասաւ իւր մուրատին.  
Գգուէր օրէնէր զԱստուածորդին  
Դա բառնայ զմեղըս Աղամին.  
Իմ տէր ես ծեր ու դու տղայ  
Դու իմ Աստուածն ինձ ողորմեայ.  
Ամ շուտով ինձ ճարակ մարայ

Որ ես խապար տանիմ նոցա.  
Ուսկա Յիսուս Տէրն կու զայ  
Մութ աշխարհիս նա լոյս կու տայ:

Ծղժողովին աւերէ  
Զարդար հոգին ազատեր է:  
(Ու. Թ. 160. Ե. Տաղարան Դար. Էջ 346-8)

Հետեւեալը վերեւի տաղին վերջաւորութեան մէկ տարբերակն է առաջին մասը  
սիրուն երկեակներով.

Ցնծացէք ուրախացէք  
Այսօր Ծնունդ է Քրիստոսի.  
Ծառ մէ ծաղկեր այսօր մեզի  
Ի նարատունկ բուրաստանէն.  
Վարդ մէ բացուեր այսօր մեզի  
Ի հրաշալի բարկ արեւէն:  
Մեր Տէրն եղաւ քառսուն աւուր  
Ոտաւք զնաց ի տաճարին.  
Սուրբ Սիմէռն սուրբ Ծերունին

Հոգովըն կայր ի տաճարին:  
Ի գիրկն էառ զաստուածորդին,  
Գգուէր դնէր վերայ ծնկին.  
Իմ տէր ես ծեր ու դու տղայ,  
Դուն իմ Աստուածն ինձ ողորմեա,  
Ամ դու շուտով ինձ ճար արա  
Որ ես խապար տանիմ նոցա:

(Ու. Թ. 160 Ե. տաղարան. Էջ 351.)

